

**«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի  
պետական աջակցության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություններ և  
լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի  
Հանրապետության հարկային օրենսգրքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքների նախագծերում  
փոփոխություն կատարելու մասին**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ**

**ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական  
աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի  
դեկտեմբերի 17-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)։

1) 8-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետի 1) ենթակետը շարադրել հետևյալ  
խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած  
առևտրային կազմակերպությունները, բացառությամբ տնտեսական  
ընկերակցությունների, օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից  
ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, ինչպես նաև դուստր  
ընկերությունների՝ որոնք չեն հանդիսանում հավաստագրման համար դիմելու  
պահին նախորդող առնվազն հինգ տարի առաջ գրանցված օտարերկրյա  
իրավաբանական անձանց կողմից ստեղծված ընկերություններ.»,

2) 18-րդ հոդվածի 2-րդ մասում «2017» թվերը խմբագրել «2019» թվերով։

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը  
հաջորդող տասներորդ օրվանից։

## **ՆԱԽԱԳԻԾ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

#### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-165-Ն (այսուհետ՝ Օրենսգրքի) 445-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: